

փոփոխական էր հապէշ կայսրութեան մէջ և միշտ մասերու բաժնուած կամ միացած են ժամանակի ընթացքին :

Յովհաննէս Թիւթիւնճիի յիշած վեց թագաւորութիւններուն մէջ իբր թէ մէկ օրէնք և մէկ կրօնք կը տիրէր (56). միայն Սէննարի մէջ օրէնք և կրօնք կը տարբերէին, զի հոն մահմետականութիւնը տարածուած էր, ինչպէս Չանկ-Շաղայի մէջ, որ Հապէշիստանի և Սէննարի երկիրին միջև կը գտնուէր. բնակչութիւնը արաբ էր և ոչ հապէշ, կրօնքով կռայաշտ ու կէս քրիստոնեայ (184—187):

Հետաքրքրական տեղեկութիւն մը եւս կուսայ Յովհաննէս Թիւթիւնճի, ըսելով թէ հապէշ կայսրը իրեն ստորադաս թագաւորներու զաւակներուն մէջ իր ուզածը յաջորդ կը նշանակէր, միւսները իր քովը պահելով, վասնզի սովորութիւն էր որ անոնք իրենց զաւակները իրենց ծնունդէն անմիջապէս յետոյ կայսեր արքունիք կը ղրկէին (58—63):

ՀԱՊԷՇ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.— Իր ճամբորդութեան նկարագրութեան մէջ՝ Յովհաննէս Թիւթիւնճի ո՛չ մէկ սող ունի Հապէշներու պատմութեան և անցեալին վերաբերեալ: Կարծես թէ անով չէ զբաղած:

Ահա ինչ որ մեզի կը ներկայացնէ Յովհաննէս Թիւթիւնճի՝ իբր տեղեկութիւն հապէշ երկիրին և ազգին վրայ:

Ասոնք, այսօր այժմէութենէ դադրած, այն ատենուան համար բացարձակ նորութիւններ էին, քանի որ Եթովպիա այն ատեն բացարձակապէս անծանօթ երկիր մըն էր, ուր մի քանի օտար և հայ միայն ոտք դրած էին:

Ահա թէ ի՛նչպէս Յովհաննէս Թիւթիւնճիի պղզ-